







Անյուշք են քեզ վաղեմի  
Յիշատակը սեպուհ նախնեաց :

Յ. — Ձեն անյուշք ինձ նախնիք իմ  
սեպուհք ,  
Ձեն և գործքնոցին վեհք ինձ թաքունք  
Այլ այս ձեր հանդերձանք կրկնակի  
տան իմաստ .  
Յիշատակ հայրենի , թէ այլ ինչ տօնի  
աստ :

Դ. — Այո՛ կրկին են առթիւք  
Մեր հրճուանաց , և տօնիս ,  
Այլ երկրքին են առնիչք  
Ձոյս տօնեմք մեք զարդիս :  
Տօն է այսօր վեհազանց  
Սուրբ Սահակայ Մեսրոբայ ,  
Յիշատակաց արժան հալոյ  
Թշուառ աղգիս թորգումայ :  
Այլ բնդ վեհիցն յիշատակ  
Իմաստութիւն զուգի յար ,  
Ընդ Սուրբ Մեսրոբ և Սահակ  
Տօնի իրաւումը և հանճար :  
Գիտէք անշուշտ զի նորա  
Մեծ բարերարք են աղգիս ,  
Ի գրական մարգ ընտիր  
' և 'ի հոգեւոր արդասիս :  
Ճարտարապետք իմաստունք  
Ճարտարեցիք զաթութայս  
Գիրտն հեղեղ հոծ անդուլ  
Ձահ վառեցին մշտալոյս :

Յիմաստութեան տաճարիս մարդին  
մանկունք թորգումայ  
Ճոխանան միտք աստանօր սրբին եւ  
սիրտք 'ի կրկն .  
Յիշատակաւ և ուսմամբ հայրենասէր  
զուգիսուն ,  
Գիտել անձին չափ և պարտք , սիրել  
և զաղգ իւր սիրուն :  
Ե.

Յ. — Բարե՛ առթիւ զերապանձ , ո՛հ  
մեծ պատճառք են տօնիս ,  
Կրկին չքնաղ առարկայք չքնաղութ  
ակըմբիս .  
Երախտագէտ սրտից պարտք 'ի յուշ  
ածել զնախնիս .  
Եւ բանական մասց տնկ չուք տալ վր-  
սեմ իմաստից :  
Իմաստութեան դուք ծնունդ , լե-  
րուք արժան հալոյ որդիք ,  
Որդիք անբիւծ , սուրբք 'ի վարս , եւ  
անբասիր կրօնիք .  
Օ՛ն զարդացէ՛ք հեղութեամբ յիմա-  
ստութեան յոյս դարձաւ ,  
Ուր հոգեկան ծաղկանք հոծ մշտա-  
վրթիւթ բուրն աստ :  
Մի՛ տայք , եղբարք իմ , տեղի ,  
չարին գործել մուտ 'ի ձեզ  
Ի բաց թողէք զկենդանոց ծոյլ , մի տայք  
ճարակ վատ կրկն .  
Կիրք խաւարին զուգոյն ջահ , թողեալ  
թափուր յամենից ,  
Եամենից իսկ բարութեանց , փառաց  
երկրի և երկնից :

Յ. } Այո՛ զրկին կիրք յամենից  
Խ. } Ձգոյ՛ լիցոյք 'ի չար կրկն :  
Մ. Վ. Մարկոսեան

Անդրիայ Արտաբեկն Գործոց վսեմ .  
Պաշտօնեայն բարեհաճած է հրամանաւ  
վեհափառ թագուհւոյն հետեւեալ պա-  
տասխանադրին ուղղել առ Ամենապա-  
տիւ Դատաւար Ս. Աթոռոյս :  
Արտաբեկն Գործոց պաշտօնատուն  
21 յունիս 1872

Տէր ,  
Պատիւ ունիմ յայտնել Ձեր Սրբադ-  
նութեան թէ՛ անթերի հասուցի թա-  
գուհւոյն Դատիւն վեհափառութեան  
ուղղութեամբ նախաձեռն , ընդ որոյ և Ձեր  
Սրբազնութեան անցեալ մարտ 13 թը-

ուականի նամակին ընկերացած գըր-  
եանքը , որոնք կը պարունակեն Սահակ  
արքեպիսկոպոսի գրած մէկ պատմու-  
թիւնը իւր ի հապէշտան ըրած ճա-  
նապարհորդութեան վրայօք , զոր յան-  
ձքն առած էր ի նպաստ այնտեղ թէո-  
դորոս թագաւորէն բռնուած Անգղի-  
այի բանտարկեցոյ :

Այժմ հրաման ստացայ թագուհիէն ,  
Ձեր Սրբազնութեան աւանդել Նորին  
վեհափառութեան սերտ շնորհակալու-  
թիւնները յիշեալ մատենագրութեան  
համար , զոր բարեհաճած էիք նուի-  
րել Նորին վեհափառութեան , միան-  
գամայն պատիւ ունիմ շնորհակալ ըլ-  
լալ Ձեր Սրբազնութեան ինձ նուիրել  
բարեհաճած հատորին համար :

Պատիւ ունիմ մնալ  
Տէր  
Ձեր Սրբազնութեան  
Ամենահաղաւթ  
Խոնարհ ծառայ  
ԿԻՄԵՆԻՆԻ

Նորին Սրբազնութեան Պատրիարքի  
Հայոց Երուսաղէմի :

Արեւելեան լեզուաց մեծանուն Տօք-  
տէօն և Բերլինի Համալսարանի ուսուց-  
չապետ Մեծ . Հ. Պետերման բարեհա-  
ճած է աշխարհագրական հինգ ընտիր  
քարտէզներ նուէր զրկել Սրբոյ Աթո-  
ռոյս Ժառանգաւորաց վարժարանին ,  
խոստանալով , յետ աւարտման , Կի-  
պերոսի նորատիպ աշխարհացոյցներն  
ևս զրկել :

Առ այս հրապարակաւ մատուցանե-  
լով մեր խորին շնորհակալութիւնք հա-  
յասէր աշխի Տօքտէօնին , արժան կը  
համարուիք հրատարակել իւր առ Ս.  
Պատրիարքն ուղղեալ ինքնագիր նա-  
մակն , որ քանի մի խիստ կարեւոր և  
բանասիրաց մտադրութեան արժանի  
կէտեր կը պարունակէ :

Գերապայծառ և Մեծայարգոյ Տէր ,  
Ձերապայծառ և մեծապատիւ Տէ-  
րութիւնդ աղաչեմ յառաջ քան զամե-  
նայն ներել ինձ՝ զի մինչև ցայժմ ոչ եւ-  
տու պատասխանի երկուց նամակաց ,  
որովք Տէրութիւն Ձեր զիս պատուեաց  
և երանելի արար : Մեծապէս շնորհա-  
կալու եմ զԳերապայծառութենէ Ձեր-  
մէ վ. ան այդոյնիկ , յորոց տեսի՝ թէ ոչ  
ամենին մտաջուլ զիս՝ և վասն գըր-  
եանցն առաքելոց առ իս , զորս 'ի վա-  
ղոյց հետէ փախաքէի ունել և ընթեռ-  
նուր :

Ձերկու թագաւորութիւնն Պատ-  
մութեան Միջնայնի Ասորոյ համեմա-  
տեցից 'ի միասին՝ թէ ժամանակ պա-  
րապոյ գտանդեցիմ , և կամիմ ճառել  
զնոցունոյ յԱրքուի՝ ձեռնարանին : Սակա  
հետաքրքրական երկամայ Պանգըլու-  
տութեան 'ի Հապէշտան՝ զոր յորին-  
եաց Տիմոթէոս վարդապետ , ճառեցից  
կամ ես ինքնին կամ մի ոմն 'ի բարե-  
կամաց իմոյ յորագիրս . և 'ի վերջ Ե-  
կեղեցական Պատմութեան Տ. Մեղքի  
սեղեկի վարդապետի ուսուցանել կա-  
միմ 'ի Համալսարանին , Ի բաղում ժա-  
մանակաց հետէ ցանկացայ դասախո-  
սել 'ի վերայ այս առարկայի . բայց  
վասն զի զայս Պատմութիւն միայն 'ի  
կաթոլիկ հեղինակաց ծանեայ՝ ոչ կա-  
րացի . և յոյժ ուրախանամ զի հուսկ  
յետոյ այս փափագն իմ լցեալ է յայս-  
պիտի գիտնական առնէ :

Ձարմանամ զի ցայսօր ոչ ոք 'ի  
գիտնականացն Հայոց անխորկեաց 'ի  
նամակա կաթոլիկոսին Գրիգորի Տղայ  
կոչեցելոյ , որ կայ 'ի գիրսն «Արքի-  
էպիսկոպոս Գրիգոր Եր. Կ. 121-25» Այս

գիրք որպէս կարծեմ գտանի յերու-  
սաղէմ կամ 'ի գրատանն հիւպատո-  
սութեան Գերմանիոյ կամ 'ի Պատրի-  
արքարանի Լատինացոցն կամ եւ 'ի  
գրատանն ընկերութեանն Պաղեստի-  
նոյ որ 'ի հիւպատոսութեանն Անգ-  
ղիոյ : Այս նամակ ուղղեալ առ Սուր-  
թանն Սալադին երեւի ինձ հարա-  
զատ և յիմում արաբական ձեռա-  
գրին ևս պատմութեանն Սալադինու  
յիշատակի . զի որպէս Բէհա ետ տին  
նոյնպէս ևս հեղինակն ձեռագրին իմոյ  
միշտ առ Սուրթանն կային . ինձ թուի  
թէ վասն այսորիկ ոչ գտանի յիշատակ-  
եալ ի հեղինակացն Հայոց զի ի տեղիս  
կաթոլիկոս տպեալ կայ «Եր. Կ. 121-25» և  
«Եր. Կ. 121-25» այլ յիմում ձե-  
ռագրին կայ «Եր. Կ. 121-25» :

Գերապայծառութիւնդ փափաքի  
գիտել քանի՞ են գրատունք հասարա-  
կաց ի Բէրլին , Կայ աստ թագաւորա-  
կան գրատուն՝ ապա գրատուն առան-  
ձին թագաւորին՝ և հուսկ յետոյ գրա-  
տուն վասն համալսարանին : Եթէ Գե-  
րապայծառութիւն Ձեր խորհի յղել  
վասն այսոցիկ մի մի օրինակ տպագ-  
րութեան Սուրբ Աթոռոյդ՝ մեծապէս  
շնորհակալու եղիցի կտաւապարութիւն  
մեր զՁեզ :

Յուսամ թէ ընկալեալ իցէ Տէրու-  
թիւն Ձեր զհինգ աշխարհագրական  
քարտէզս՝ զոր առաքեցի . յորժամ ա-  
ւարտեալ իցէ տպագրութիւն քարտի-  
զացն Կիպերոսի պայսոսիկ ևս յիցից  
Գերապայծառութեանդ՝ վասն զի այ-  
սօրիկ լաւագոյն եղիցին քան զայլս  
ամենայն :

Մատուցանելով ի խորոց սրտէ գոյ-  
ջոյն մեծարանայն և սիրոյ Ձերումմե-  
ծապայծառ Տէրութեան և մեծապա-  
տիւ միաբանից Սրբոյ Աթոռոյդ կամ  
և մնամ Ձերում Գերապայծառու-  
թեան :

Խոնարհ ծառայ  
Հ. Բէրլինս  
Ի Բ'րլին 16 յուլ 1872

ՅԱՄԱՆԱԿԱՆԱԿԱՆՔ

Յունիս 30ին Սուրբառ կուսակալ բա-  
շան Յոպպէ հասաւ . ծովուն եղերքը  
երկու ոչխար մորթեցին 'ի պատիւ նորա  
դաշտեան . և ամսոյս 1ին Ռէմէ հաս-  
նելով մինչև հետեւեալ օր երեկոյ հոն  
անցուց . և 3ին յանախնկաւ Երուսաղէմ  
հասաւ : Նոյն երեկոյ քաղաքի բնակիչք  
ճրագավառութեան հանդէս կատարե-  
ցին 'ի պատիւ նորեկ կուսակալին :

Յուլիս 8ին Երուսաղէմէն մեկնեցաւ  
նախկին Կառավարիչ Գեամիլ Բաշան :  
Ամսոյս 11ին Պոլսէն եկած հեռա-  
գիրք կիմացեալ Արքեպիսկոպոսին  
Երուսաղէմի կուսակալութեանն բաժ-  
նուիլը :

Տեղոյս Կուսակալն ևս հեռագրով  
իր պաշտօնէն հրաժարեցաւ : Մինչև  
ցարդ դեռ պատասխանն եկած չէ :

Ամսոյս 6ին Երուսաղէմացի 18 տա-  
րեկան միամօր Բոյն Նորեպան մը Յոպ-  
պէի ծովուն եղերքը ձին լուսէն լե-  
տոյ . ինք ևս ծով կը մտնէ . բայց դժ-  
բաղդութեամբ կընկղմի և անայտ կըլ-  
լայ : Դառ հետախուզութիւն ըրած են  
զիտիկ գտնելու , բայց 'ի դուր : Մինչ-  
դեռ զիտիկ գտնողին մէկ ոսկի տալ  
խոստացած է Բեթլեհեմի Յունաց ա-  
ռաջնորդ Գեալ Եպիսկոպոսը . որ նոյն  
միջոցին Յոպպէ կը գտնուէր :

Ամսոյս 27ին հինգշաբթի օրը Ամե-  
նապատիւ Տ. Տ. Եսայեայ Ս. Պատրիարք  
Հօր անուան տարեդարձի տօնախմբ-  
ութիւնն ըլլալով՝ փառաւոր հանդի-  
սիւ կատարեց միաբանութիւնն :

Սուրբ Պատարագէն վերջը հանդի-  
սիւ և շարական երգելով հանդերձ մի-  
աբանութեամբ , ժողովրդօք և քաղա-  
քիս պատուաւոր անձանց հետ բազ-  
մութեամբ եկան 'ի պատրիարքարան ,  
այն տեղ ժառանգաւոր աշակերտք եր-  
գեր երգեցին , և պատրաստուած ճա-  
ռեր կարդացին : Ժառ կարդացող ա-  
շակերտներն էին . Ա. Կարապետ Տ.  
Յովհաննէսեան թրակացի Հայերէն , Ե-  
րախտագիտութեան վրայ . Բ. Գաղղի-  
երէն , Յովհաննէս Խաչատուրեան Մա-  
լաթեացի . Գ. դարձեալ Հայերէն , Կա-  
րապետ Մկրտիչեան Եւդոկեացի . օր-  
ուան պարագայից վրայ . և Դ. Ս. Ա-  
թոռոյս միտքան աւագ Սարկաւագ Տ.  
Կարապետ Տէր Մինասեան՝ գեղեցիկ ու  
սրտառու յոտանաւոր մաղթանք մի  
կարդաց , որոց պատասխանեց Նորին  
Սրբազնութիւնը , օրուան հանդէսը ա-  
ռիթ առնելով բաւալ , թէ սոյն հանդէ-  
սը որ ամեն տարի կը կատարէ Միա-  
բանական ուխտս , ոչ այլ ինչ է , բայց  
եթէ հոգեւոր ուրախութիւն և առիթ  
սիրակցութեան , սոյն հանդէսը սեպհա-  
կան չէ միայն ինձ , այլ կը վերաբերի  
բովանդակ միաբանութեանս , ուստի  
այս տօնախմբութիւնն ալ Միաբանու-  
թեան տօնախմբութիւնն է :

Յայտնեց նաև , որ այս հանդէսը  
ամեն տարի կատարելով՝ տարեկալս  
մը կը սեպուի . այսպիսի աւուրց մէջ  
պէտք է յիշենք , որ մեր կեանքէն տա-  
րի մը ևս պակաս է , ուստի հարկ ան-  
հրաժեշտ է , որ քննենք զմեզ և տես-  
նենք թէ իւրաքանչիւրինս մեր ստանձ-  
նած պարտքերնս կատարած ենք .  
թողունք որ ամեն մարդ՝ իրեն մարդ-  
պարտաւորութիւններ ունի առ Աս-  
տուած , առ անձն և առ ընկերս , այլ  
նաև Ս. Աթոռոս իրեն Աղգին մէկ  
պատուոյ նստը մեզ յանձնուած է լու-  
րութեամբ լի , այս նաւուն մէջ ամեն  
ոք իւրեանց պաշտօնն ու պարտքերն  
ունին , նաւուն ապահովութիւնը բո-  
լոր պաշտօնէից միութեան և պարտա-  
կատարութեան կախում ունի . ուս-  
տի իւր պաշտօնը պակաս չգողք պար-  
տազանց է և պատասխանատու նա-  
ւուն վտանգին :

Աղդ՝ պէտք է մտածենք այս բա-  
նին վերայ , եթէ մենք ամենքնս ալ  
մեր պարտքը կատարած ենք , ան-  
շուշտ վարձքը պիտի ընդունինք , զոր  
պատրաստած է Աստուած . իսկ եթէ  
չենք կատարած , արդէն իսկ դատա-  
պարտեալ ենք իւր պարտազանց :  
Յետոյ յորդորելով զամենքը եւ  
օրհնելով Աղգն ու Միաբանութիւնը ,  
իւր շնորհակալութիւնը յայտնեց ևս  
վերջացուց :

Այս երեկոյ ևս Միաբանութեան  
սեղանատունը պարկեշտ ու չափաւոր  
հացկերելով մի պատրաստուած էր , ուր  
յատուկ հրաւիրուած էին քաղաքիս  
պատուաւոր աղգայիններէն ոմանք :  
Խիստ կանոնաւոր և վայելուչ էր բոտ  
ամենայնի ոյն հանդէսն ալ . հոգեւոր  
և սրտառու մաղթանքներ կը բարձրա-  
նային առ Աստուած , ամեն սիրտ համա-  
կուած էր քաղաքի բերկրութեամբ , և  
յաւարտ ընթրեաց նոյն ուրախու-  
թեամբ , երգովք և շարականօք գնա-  
ցին 'ի պատրիարքարան և ապա մեկ-  
նեցան ամենքեան իւրեանց տեղը :

(Միտն)  
ԱՄԱՆԻՊ ՂԱԶԵԼԻԱ  
ԿԱՐԱՊԵՏ Տ. ՓԱՆՈՍԵԱՆ  
Գալովտառ Բէնէճմիկի բաղարկումա  
Ն. 29 իրի խանդառ